## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **24 հոկտեմբերի 2023թ.**

2023թ-ի հոկտեմբերի 3-24-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Է. Հովհաննիսյան՝ | Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, |
| Ն. Մնացականյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-հողաշինարար, |
| Ս. Սահակյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ, |
| Վ. Ղազարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ, |
| Ս. Այվազյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ-ի հոկտեմբերի 3-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված միավոր ծառայությունների գնման գների հանրագումարը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքներ | 124,740,631.37 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Փարոս-Գազ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 50/1 | +374 94481520 | martoyan-arman@mail.ru | 02201147 |
| 2 | «ԷԼՇԻՆ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Ադոնցի 10 | +374 33273747; 93781815 | elshinllc@gmail.com | 04229683 |
| 3 | «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ | ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Ավանգարդ 29 Ա | +37493007006 | ag.baghdasaryan@yahoo.com | 09202684 |
| 4 | «Բիդեք» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա | +374 11 575522,93189993 | bedeck.llc@mail.ru, info@bedeck.am | 00450801 |
| 5 | «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ ք, Արտաշատ Շահումյան փ, շ, 7/33<br>ՀՀ ԱՐԱՐԱՏ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ՄԱՍԻՍ-ՌԱՆՉՊԱՐ ԽՃՂ., 3, 0822 | +374 99035855, +374 94000204, +374 77712488 | stroy-groupllc@mail.ru | 04240007<br>00110978 |
| 6 | «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք, փ Պարոնյան 38տ;<br>ՀՀ Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի 5. | +374 98000204; +374 98000204; 93 000204 | khosrovartak@mail.ru<br>artplas@inbox.ru: | 04440049 |
| 7 | «ՍՏԱՐՏ ՔՈՆՍՏՐՈՒՔՏ» ՍՊԸ - «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիսավան, Հ. Բաղրամյան փ./տ/35<br>ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Միկոյան փ.շ.4, բն.29 | +374 33899999<br>+374 77402403 | start.qonstruqt@mail.ru<br>Shhoyan4@gmail.com | 04244858<br>02861537 |
| 8 | «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ | ՀՀ, Արարատի մարզ գ. Ոստան Երկաթուղային 14 | +374 77922522 | s.Arist@mail.ru | 04201249 |
| 9 | «ԱՐՄՇԻՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ - «ԷՆՔԱՂՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ, ք. Երևան, Թումանյան փ., շ. 24, բն. 37<br>ՀՀ, ք. Գավառ, Միքայելյան 20 | +374 77117878<br>+374 77117878 | armshinservice@mail.ru<br>enqaxshin@mail.ru | 02897523<br>08416027 |
| 10 | «Ռուբուշ» ՍՊԸ | ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք | +374 33304204 | director_dskzodchiy@mail.ru | 01239766 |
| 11 | «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Նոր-Նորք, Մոլդովական փող., 27 շենք, բն. 78 | +374 91414701 | mmvshingroup@mail.ru | 01019617 |
| 12 | «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | ՀՀ, Արարատի մարզ Ոստան համայնք Արարատյան 9<br>ՀՀ, ք. Երևան, Թումանյան 12/38<br>ՀՀ, ք. Արմավիր, Իսահակյան 97 | +374 93314808<br>+374 55022888<br>+374 93988889 | premium_shin@mail.ru<br>armianx@gmail.com<br>premium_shin@mail.ru | 04234373<br>00466963<br>04400229 |
| 13 | «Ստանդարտ Պարկ» - «Կ.Ս.Վ. Շին» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ, Արմավիրի Մարզ, գ. Քարակերտ, Կամոյի փող., տուն 27<br>ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ախուրյանի խճ. 2 | +374 77796111<br>+374 98220383 | standartpark.arm@mail.ru<br>ksv-shin@mail.ru | 04447442<br>05531412 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- **«ԷԼՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին պատկանող քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Շինարարության իականացում՝ Տրանսպորտային» ոլորտի ներդիրը:

- **«Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում, որպես ընթացակարգի հրավերով պահանջվող քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Շինարարության իրականացում՝ Տրանսպորտային» ոլորտի ներդիր, ներկայացված է այլ կազմակերպությանը պատկանող փաստաթուղթ, սակայն https://gnumner.minfin.am կայքում ՀՀ ՖՆ կողմից հրապարակված հաճախ տրվող հարց ու պատասխանների ցանկի 21-րդ կետով պարզաբանումնված է, որ «հրավերով սահմանված պահանջներին պետք է բավարարի մասնակիցը, իսկ ենթակապալառուն չի հանդիսանում մասնակից», ուստի **«Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում է **«Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ին պատկանող Ընթացակարգի հրավերով պահանջվող** քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի «Շինարարության իականացում՝ Տրանսպորտային» ոլորտի ներդիրը:

- **«Բիդեք» ՍՊԸ-ի** կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել:

- **«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերում, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 2-ի, որպես գնման ընթացակարգի գնման ձև նշված է

«գնանշման հարցում», սակայն սույն գնման ընթացակարգը «բաց մրցույթ» է, միաժամանակ՝ ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվի փաստաթղթում 2-րդ բաժնի կշիռի շեղումը գերազանցում է Ընթացակարգի հրավերով սահմանված թույլատրելիի շեմը, ինչպես նաև ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

- **«ՍՏԱՐՏ ՔՈՆՍՏՐՈՒՔՏ» ՍՊԸ - «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված կոնսորցիումի պայմանագրում, որպես գնման ընթացակարգի գնման ձև նշված է «գնանշման հարցում», սակայն սույն գնման ընթացակարգը «բաց մրցույթ» է, միաժամանակ՝ Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել:
- **«Ռուբուշ» ՍՊԸ-ի** կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել:
- **«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիայի՝ «Շինարարության իականացում՝ Տրանսպորտային» ներդիրները, միաժամանակ՝ Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովման բնօրինակը գնահատող հանձնաժողովին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, չի ներկայացրել:
- **«ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի կողմից լրացված և հաստատված աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվի փաստաթուղթը:
- **«Ստանդարտ Պարկ» - «Կ.Ս.Վ. Շին» ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1-ի, բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը, մաժամանակ՝ գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 2-ի, հաշվարկը սխալ է կատարված, մասնավորապես՝ «Արժեք»՝ 81695668 ՀՀ դրամ և «ԱԱՀ»՝ 16339134 ՀՀ դրամ, դաշտերի հանրագումարը փաստացի ստացվում է 98034802 ՀՀ դրամ, սակայն մասնակցի կողմից նշված է՝ 98034801 ՀՀ դրամ:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գին | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքներ | «Փարոս-Գազ» ՍՊԸ | 124740631.37 | 78647917.5 | 15729583.5 | 94377501 |
| | | «ԷԼՇԻՆ» ՍՊԸ | | 76611266 | 15322253 | 91933519 |
| | | «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ | | 79862170 | 15972434 | 95834604 |
| | | «Բիդեք» ՍՊԸ | | 86956721 | 17391344 | 104348065 |
| | | «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | | - | - | - |
| | | «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | | 69645000 | 13929000 | 83574000 |
| | | «ՍՏԱՐՏ ՔՈՆՍՏՐՈՒՔՏ» ՍՊԸ - «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիում | | 70923823.6 | 14184764.72 | 85108588.32 |
| | | «Արտաշատի ԷՅՇ» ՍՊԸ | | 91665845 | 18333169 | 109999014 |
| | | «ԱՐՄՇԻՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ - «ԷՆՔԱՂՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | | 79001328 | 15800266 | 94801594 |
| | | «Ռուբուշ» ՍՊԸ | | 69165000 | 13833000 | 82998000 |
| | | «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 73834900 | 14766980 | 88601880 |
| | | «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | | 77000000 | 15400000 | 92400000 |
| | | «ԿՍՎ-Շին» ՍՊԸ | | 81695668 | 16339134 | 98034801 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

09.10.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի, «Բիդեք» ՍՊԸ-ի, «ՍՏԱՐՏ ՔՈՆՍՏՐՈՒՔՏ» ՍՊԸ - «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիումի, «Ռուբուշ» ՍՊԸ-ի, «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Ստանդարտ Պարկ» - «Կ.Ս.Վ. Շին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել, Ընթացակարգի հրավերի 8.2 և 8.10 կետերով սահմանված պահանջների համաձայն:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

24.10.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, բացառությամբ՝ «ԷԼՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակը, իսկ «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ի կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Վավա Սիստեմս» ՍՊԸ-ի հետ, վերջինիս՝ «Վավա Սիստեմս» ՍՊԸ-ին պատկանող հրավերով պահանջվող լիցենզիաները և ընթացակարգին մասնակցելու նոր դիմում հայտարարություն, որում որպես ընթացակարգի մասնակից ներկայացված է «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ և «Վավա Սիստեմս» ՍՊԸ կոնսորցիումը, սակայն մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկում, որը շտկման ենթակա չէ, մասնակից է հանդիսանում «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը ապահովելու նպատակով՝ համադրելով նաև լիազորված մարմնի կողմից հրապարակված հաճախ տրվող հարց ու պատասխանների ցանկի 21-րդ կետի պարզաբանումը և հաշվի առնելով, որ մասնակիցը հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու և ներկայացվող փաստաթղթերի առումով՝ մասնավորապես գնային առաջարկի մասով, ունի սահմանափակում՝ վերջինս շտկման և փոփոխման ենթակա չէ և որի համաձայն մրցույթի մասնակից է հանդիսանում «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ն, այլ ոչ թե «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ և «Վավա Սիստեմս» ՍՊԸ կոնսորցիումը, ուստի կարող ենք փաստել, որ «Վավա Սիստեմս» ՍՊԸ-ին պատկանող լիցենզիաները չեն կարող գնահատվել որպես «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ին պատկանող փաստաթղթեր և վերջինիս հայտը չի կարող գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

24.10.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «ԷԼՇԻՆ» ՍՊԸ-ի և «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել, Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8.10 կետով սահմանված պահանջների համաձայն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետը իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի

2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «ԷԼՇԻՆ» ՍՊԸ-ին և «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Փարոս-Գազ» ՍՊԸ՝ | բավարար |
| 1 | «ԷԼՇԻՆ» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1 | «Գորիսի Ջրատարշին» ՓԲԸ՝ | անբավարար |
| 1 | «Բիդեք» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1 | «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում՝ | անբավարար |
| 1 | «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում՝ | բավարար |
| 1 | «ՍՏԱՐՏ ՔՈՆՍՏՐՈՒՔՏ» ՍՊԸ - «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիում՝ | անբավարար |
| 1 | «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ՝ | բավարար |
| 1 | «ԱՐՄՇԻՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ - «ԷՆՔԱՂՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում՝ | բավարար |
| 1 | «Ռուբուշ» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1 | «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1 | «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում՝ | բավարար |
| 1 | «ԿՍՎ-Շին» ՍՊԸ՝ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

24.10.2023թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Փարոս-Գազ» ՍՊԸ | | 78647917.5 |
| | «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | X | 69645000 |
| | «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ | | 91665845 |
| | «ԱՐՄՇԻՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ - «ԷՆՔԱՂՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | | 79001328 |
| | «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | | 77000000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում 04.09.2023թ-ին ներկայացվել է հարցում, որին համակարգի միջոցով՝ 04.09.2023թ-ին տրվել է պարզաբանում:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված

մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Է. Հովհաննիսյան __________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Մնացականյան __________________

Ս. Սահակյան __________________

Վ. Ղազարյան __________________

Ս. Այվազյան __________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան __________________